# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-18/10» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«29» հոկտեմբերի 2018թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

Ավետիք Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

Հովհաննես Ստեփանյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արմինե Ալիխանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու,

Լիլիթ Հովհաննիսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու:

*հանձնաժողովի քարտուղար՝*

Օֆելյա Ասատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Միս) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. **Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.**

«Սարգիս և Մարիաննա» և «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ները սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

2. **Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ.**

«Սարգիս և Մարիաննա» և «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված՝ Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովն արձանագրել է անհամապատասխանություններ՝ մասնավորապես.

-«ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման ԴԻՄՈՒՄ (Հավելված 5)-ը ներկայացված է էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով, ինչի արդյունքում առկա էլեկտրոնային թվային ստորագրության վավերականությունը հնարավոր չէ դիտել և ստուգել, ինչպես նաև բացակայում է «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված No ԳԻ-02/18 ծածկագրով համանման (նմանատիպ) պայմանագրի 1-ին կետում (Պայմանագրի առարկան) նշված պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 Հավելվածը:

-«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի ներկայացված հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման ԴԻՄՈՒՄ (Հավելված 5)-ում բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովը որոշեց.

-հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետը, ինչպես նաև նույն Կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018թ. նոյեմբերի 31-ին ժամը՝ 12.00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի քարտուղարին.

-մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2018թ. նոյեմբերի 30-ը ներառյալ, շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ավետիք Ավագյան

Անդամներ՝

Հովհաննես Ստեփանյան

Կարեն Մելքոնյան

Արմինե Ալիխանյան

Լիլիթ Հովհաննիսյան

Քարտուղար՝ Օֆելյա Ասատրյան